



## 49. ԱՆԶԳԱՄ ԿՆԻԿՐ

Կըլնի, շիլնի մի մարդ, մի կնիկ։ Սրանք շատ քյասիր, անճար են ըլնում։ Մարդը էթում էր սրա-նրա կուշտը ֆահլություն անում, հոտաղություն անում, յա էթում էր հանդը, չոփ-մոփ հավաքում, թիթեն հավաքում, տանում ծախում, մի քանի շայի աշխատում, բերում օղլուշաղը պահում։ Մի խոսքով, մարդը շատ աշխատավոր մարդ էր. համա կնիկը ընե՞նց մի անդգամ, ընե՞նց մի ասսու էրեսիցը թափած, ընե՞նց մի տնաքանդ, որ էլ շեմ կարա ասի:

Ասսու իրան օրը մարդի յախեն էր կպնում. — Ա՛յ մարդ, — ասում էր, — գնա՛ ինձ հմար է՛ս առ, է՛ն առ. գնա է՛ս բե, է՛ն բե. է՛ս շթին շեմ հավանում, է՛ն շթիցը բե:

Հսենց խեղճ մարդին դարդավարամ էր արե, թողե:

Մեռնում էր կնկանը խրատելոն. — Ա՛յ կնիկ, ախար ըսենց շիլնի. տեսնում ես քյասիր, օրեն հացի մուրացկան ենք, անջախ ենք ծերը ծերին հասցնում, զլուխ պահում, պտի մեր յորդաննու զյուրա ոններս մեկնենք։

Համա ո՞ւմ ես ասում. նա հենց իրա էշն էր քշում։ Վերջը որ շատ մարդի աֆաթն առավ, մարդը միտք արեց, զլուխն առնի, մի դհով էթա, բալի կնկա ձեռիցը պրծնի։ Օրեն մի օրը մի քիչ հացմաց վե կալավ ու յա՛լլա՛ դռնե դուաւ.

Գնաց, գնաց, գնաց, շատն ու քիշն աստոծ գիտա, դուս էկավ

մի շու, յարանի տեղ: Ըստնց մտքի հեննա ընկած էթում էր, բիրդան տեհավ՝ հրեն գեննին մի եքա կոլոլ քար: Ծըռընշալեն էդ քարը բանձրացրեց, եղ բցեց՝ տեհավ տակին, ըհը՛, մի խոր, անտակ ֆոր, միշիցն էլ մի ղըժվրժոցի, ղալմաղալի ձեն ա գալի: Վախլությունիցը էն սհաթը քարը էլ եղ դնում ա ֆորի բերնին:

ոէս լավ էլավ,—ասում ա ինքն իրան,—սրանից էլ լավ տեղ չկա. էթամ կնկանս խարլությունով բերեմ քցեմ ըստե, բալի մի հետ յախես ազատվի նրա ձեռիցը, թողաց, էկավ տուն:

— Ա՛յ կնիկ,— ասեց, — ըսե՛նց, ըսե՛նց բան, ըսօր զնացել ի հանդը չոփի հավաքելու, տեհա՝ գեննին մի կոլոլ քար վեր ընկած ա, բանձրացրի քարը, ի՞նչ տենամ՝ մի եքա ֆոր, մեշը լիքը խաղինա՝ էլ ոսկե մատանքնե՛ր<sup>1</sup>, էլ մարգարտնե՛ր, էլ մարշաննե՛ր ու հաղար մի ջուռա թանկագին քարեր. քոմմա ընենց ֆըրֆը-րահար ին զալի, պսպղում, որ մարդի քեֆ ին բերում:

— Ղո՞րթ,— հարցնում ա կնիկը:

— Ղո՞րթ: Չես ավատում, է՞թանք տես:

— էթանք,— ասում ա կնիկը:

Մարդ ու կնիկ առավոտը գշերով-գշերհանա վեր են կենում, մի էրկեն պարան վեր ունում, ճամփի հմար պաշար վեր ունում, ընկնում ճամփա: Գալիս են, գալի, հասնում են էդ ֆորի ղըաղը: Մարդը քարը բանձրացնում ա:

— Ա՛յ կնիկ,— ասում ա, — բե՛ պարանը կապենք մեջքս, կախ ըլնեմ ֆորը, ի՞նչ կա չկա, հավաքեմ, դու գամ:

— Զէ՛, ա՛յ մարդ, ես պտի կախ ըլնեմ. դու կէթաս լավ զադերը վե կունես, փսերը կթողաս ինձ:

Քոռն ի՞նչ կուզի՝ էրկու աշը: Զաթի մարդն էլ հենց էս էր ուղում: Բերեց պարանը կապեց կնկա մեջքը, կախ արեց ֆորը: Հենց որ հասավ անտակը, մարդը պարանի տուտը ձեռիցը բաց թողաց: Եննա բերեց էն քարը էլ եղ դրեց ֆորի բերնին, որ դուս չգա:

— Զըհա՛նդամը գլոռ, — ասեց, — հո՛ յախես պրծացրի անդգամ կնկանս ձեռիցը, սրանից դենը ի՞նչ ուղում ա ըլնի. որ էն աշխարքումը Կալրե կարասի միջին էլ տնկվեմ, դուս չգամ, յա թե չէ Դժոխւթի: կրակում էրվեմ, փոթոթվեմ, է՛լի այնումն չի:

<sup>1</sup> Տպագիր տեքստում հաշորդում է՝ էլ բոլիանտնե՛ր, որը բանահավաքի ձեռքով չնշված է (Ա. Կ.):

Վե կացավ, էկավ տուն: Անցկացավ մի օր, էրկու օր, իրեք օր,  
մի շաբաթ, օրեն մի օրը ասեց. «Էթամ, տեսնամ կնիկս ինչ հալի ա-  
մեռա՞վ, սա՞զ մնաց»:

Էկավ, էկավ, հասավ ֆորի դրաղը: Անկաշ գրեց, ի՞նչ տեսա-  
ֆորի միջիցը մի ընե՞նց զրժվըցի, մի ընե՞նց հարայ-հրոցի ձեռ  
ա գալի, որ աստոծ փրկի, ազատի:

Քարը մի քիչ դեն տարավ թե չէ, տեհավ ընդիան ձեռ տվին.  
«Ա» սսու սիրում, ա՛յ հողածին, ի՞նչ կընի՝ էդ քարը դեն քցես, մի  
ըստիան դուս գանք, էս Անզգամ կնկա ձեռիցը պրծնենք. հալբաթ  
մընք էլ մի օր քու լավությունի տակիցը դուս կգանք»:

Էդ մարդի մեղքն էկավ, քարը բանձրացրեց, ֆորի բերանը բաց  
արեց, տեհավ, ըհը՛, ընդիան Սատանեքը իրար եննուցը դուս էկան,  
ֆորի շորս բոլորը կանեցին: Սատանեքանցը որ տեհավ, վախլու-  
թյունիցը քիչ մնաց լեղի-մեղին պատոի:

Համա Սատանեքանց մենծը մոտացավ նրան.— Մի՛ վախի,—  
ասեց,— դու որ մեզ ըսնեց մի լավություն արիր, էս Անզգամ կնկա  
ձեռիցը պրծացրիր, պտի քու լավությունի տակիցը դուս գանք՝ մընք  
էլ քե՛զ մի լավություն անենք: Ես,— ասեց,— հրես էթամ, կմննեմ  
թագավորի աղջկա փորը. ի՞նչ դեղ, դարձան անեն, ի՞նչ հեքիմ բե-  
րեն, շեմ դուս գա: Էս որ կլսես,— ասեց,— վե կկենսաս, կգաս թա-  
գավորի կուշտը. «Թագավորն ապրած կենա, — կասես,— ես քու  
աղջկանը կլավացնեմ»: Հենց որ կմննես աղջկա օթախը, ալրիալը  
ես դուս կգամ, կէթամ. աղջիկը կլավանա, կընի ոնց որ մորեն մին:

Սատանեն էս կասի ու աներևութք կըլնի: Էս մարդն ա՛ վե կկե-  
նա, կգա իրանց տունը: Անց կկենա մի վախտ, սաղ դեղը շավ կըլնի,  
թե. «Թագավորի աղջիկը գժվել ա: քանասում տակ զընչլով նրա ձեռ  
ու ոտը կապել են, քցե մի օթախ. աշխարումն էլ հեքիմ շի մնացե,  
բերել են՝ լավանալու ճառ, իլլաշ շիլնում»:

Էս մարդը էս որ կլսի, վե կկենա կէթա թագավորի կուշտը:  
— Խի՞ ես էկե, — կհարցնի թագավորը:

— Ես հեքիմ եմ, — կասի, — էկել եմ աղջկանդ լավացնեմ:

— Թե լավացրիր, — կասի թագավորը, — ի՞նչ ուզես՝ կտամ:

Սրան կտանեն աղջկա օթախը: Կտենա, զորթ որ, հրեն քառա-  
սում տակ զընչլով ձեռ ու ոտը կապված: Կմոտանա աղջկանը, սուտ-  
մուտ գիր կանի, ինքն իրան կփընթփընթա, սաքի թե աղոթք ա

ասում: Սատանեն սրան որ կտենա, ալբիալը դուս կգա աղջկա փոքրիցը, կէթա:

— Տե՛ս,— կասի Սատանեն,— ըստիան էթում եմ Հնդստանու թագավորի աղջկա փորը մննեմ: Համա ըլլնեմ-շիշանամ գաս ընդէ հա՛, թե չէ իմաց կաց՝ նրան կթողամ, քու փորը կմննեմ:

— Չէ՛,— կասի,— հո շեմ գծվե. գալիս եմ՝ ի՞նչ անեմ:

Սատանեն կթողա, կէթա: Էդ մարդը աղջկա զընշլները եղ կանի, կրերի թագավորի կուշտը: Աղջիկը կլավանա, կըլնի ոնց որ մորեն մին: Թագավորը կուրախանա, աշխարով մին կըլնի:

— Ա՛յ մարդ,— կասի,— ուզա՝ տամ:

— Թագա՛վորը սաղ ըլնի,— կասի,— ի՞նչ տաս՝ ղարուկ եմ:

— Բաս որ ըտենց ա, իմ աղջիկը տալիս եմ քեզ, տա՛ր, մորդ կաթի նման քեզ հալալ ա. շունքի դու ըլլնեիր՝ նրան լավացնելու ճար, իլլաջ չէր ըլնի:

Թագավորը բերում ա աղջիկը սրան ա տալի, օխտն օր, օխտը գշեր հարսանիք անում:

Սրան թողանք ըստե, գանք խարար տանք Սատանիցը:

Սատանեն էթում ա մննում Հնդստանու թագավորի աղջկա փորը: Թագավորը աշխարումն էլ հերիմ չի մնում՝ բերի ա տալի, չեն կարում լավացնի: Վերջը խարար են տալի թագավորին, թե՝ ֆլան թագավորի փեսեն ըսե՛նց, ըսե՛նց, ըսե՛նց գլուխ հերիմ ա, թե լավացնի՝ նա կլավացնի, էլ մարդ չէ: Հնդստանու թագավորը էն սհաթը մարդ ա զրկում էր թագավորի կուշտը, ապսպարում, որ փեսին զրկի, գա իրա աղջկանը լավացնի, թե շղրկեց, — ասում ա, — մենծ զոշուն վե կունեմ, կէթամ վրեն կոիվ:

Էդ Հնդստանու թագավորի մարդն ա՝ ճամփի թադարեք ա տեղում, վե կենում, ընկնում ճամփի: Գալիս ա, գալի, շատն ու քիչն աստոծ գիտա, հասնում ա էդ թագավորի երկիրը:

Էթում ա թագավորին գլուխ տալի, ասում.— Թագա՛վորն ապրած կենա, Հնդստանու թագավորի աղջիկը գժվել ա. լսել ա, որ քու փեսեն ըսե՛նց, ըսե՛նց, ըսե՛նց գլուխ հերիմ ա, կանչում ա, որ նրան լավացնի:

Խեղճ փեսեն մնացել էր էրկու զրի արանքին. չէր իմանում ինչ անի, չէթար՝ պտի էրկու թագավորի արանքը կոիվ դուս գար. էթար՝ վախում էր Սատանեն աղջկանը թողար, գար մններ իրա փորը:

Միտք արեց, միտք արեց, վերջն ասեց. «Զըհա՛նդամը գյոռ,  
կէթամ, ինչ ըլնում ա՝ ըլնի»:

Էս մարդն ա՝ ճամփի թաղարեք ա տենում, Հնդստանու թագա-  
վորի զրկած մարդի հեննա վե կենում, ընկնում ճամփա: Գալիս ա,  
դալիս ա, շատն ու թիշն աստոծ գիտա, մի օր, էրկու օր, իրեք օր,  
մախլասի՝ մի շարաթ<sup>1</sup>, հասնում ա Հնդստան: էթում ա դուզ թա-  
գավորի ամարաթը, թագավորին գլուխ տալի, ընդե կանում:

— Ֆլա՛ն հեքիմը դո՞ւ ես,— հարցնում ա թագավորը:

— Հա՛, թագա՛վորն ապրած կենա, ես եմ,— ասում ա:

— Իմ աղջկանը կարա՞ս լավացնի:

— Բանն աստոծ,— ասում ա,— թագա՛վորը սաղ ըլնի:

Էս մարդին տանում են թագավորի աղջկա օթախը, Տենում ա՝  
հրեն աղջիկը զընջներով կապկած ա: Սատանեն սրան որ տե-  
նում ա, ձեն ա տալի.— Ա՛յ մարդ, չէ՞ ես քեզ ասեցի՝ չգաս. դու ո՞նց  
սիրտ արիր էկար:

— Սո՞ւս, Սատանա աղպեր,— ասում ա,— ես հո չե՞մ էկե սրան  
լավացնեմ. էկել եմ քեզ իմաց տամ, որ էն Անդգամ կնիկը ֆորի  
միջիցը դուս ա էկե, քու եննուցը ման ա գալի: Լսել ա, որ էկել ես  
Հնդստան, ինքն էլ վեր ա կացե, էկե քու հավարին. ճար ունես՝ տե՛ս:

— Ամմա՞ն, ասսու սիրում,— ասում ա Սատանեն,— բաս որ  
ըտենց ա՝ դուս գամ ըստիան փախնեմ, էթամ ուրիշ երկիր, քանի  
էն կնիկը չի էկե, ինձ գտե:

Սատանեն էս ասում ա թե չէ, թագավորի աղջկա փորիցը դուս  
ա գալի, փախնում: Աղջիկը ալրիալը լավանում ա, ըլնում ոնց որ  
մորեն մին: Նոր էդ մարդը աղջկա զընջները եղ ա անում, տանում  
թագավորի կուշտը:

Թագավորը ուրախանում, աշխարով մին ա ըլնում: Բերում ա  
էդ մարդին իրա քաշովը մին ոսկի ա տալի, ճամփու դնում էլ եդ  
իրանց երկիրը:

<sup>1</sup> Տպագիր տեքստում այս արտահայտությունը բանահավաքի ձեռքով չընէ-  
ված է (Ա. Կ.):

